Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
186

1999

43973-Ա.Հ.

47.

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ԳԵՐԵՐՋԱՆԻԿ ՀՈԳԵՒՈՐ ՏԵԱՌՆ

ԱՆՏՈՆԻ ՊԵՏՐՈՍԻ Թ.

ՊԱՏՐԻԱՐՔԻ ԿԻԼԻԿԻՈՅ

ԵՒ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ

1382

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԼՏԱՆՑԸ ՀԱԳԸԳԷԹ ԼՐԱԳՐՈՅ

— 1873 —

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-ԹՄ.ԳԵՐ
им. М. Ш. Ալիշանի

28057-62

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

ԾԱՌԱՅ

ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ.

ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՑ ՈՒՂՂԱՓԱՌԱՑ

ՀԱՍՏԱՏԵԱԼ, Ի ՍՈՒՐԲ ԳԱՀԷՆ ՀՌՈՎՄԱՅ

Պատուական Եղբարց Մերոց Արհիեպատիւ Գերապայծառ Արքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց, Յարգոյապատիւ Կղերց և Աստուածասէր Ժողովրդեան Պատրիարքութեան Մերոյ Ողջոյն և Աստուածաւանդ Օրհնութիւն։

Ուրախութիւն ամիսը անցնելու վրայ է՝ քանի որ Մեր վիճակէն՝ Մեր բոլոր Պատրիարքութեան սահմանէն աքսորված Ձեզմէ հեռու կը դտնուինք, Պատուական Եղբարք, Յարգոյապատիւ Գործակիցք և Սիրելի Որդիք, զուրկ մնալով միանգամայն այն քաղցր մխիթարութենէն՝ զոր ունէիք, երբ որ՝ Աստուածային Տնօրինութենէն Մեր խնամքին յանձնուած Եկեղեցւոյս Հովուական պաշտամանց հոգը՝ Ձեր մէջը և Ձեզի հետ մէկտեղ կը վարէինք 'ի փառս Աստուծոյ և յօգուտ Ժողովրդեանս։

Ծանօթ է Ձեզի ամենուդ՝ թէ ինչպէս Եկեղեցւոյ հին թշնամին՝ ըստ իւր սովորութեան՝ հասարակութեանս մէջ երկպառակութեան որոմը ցանելով դրդուեց անհաղարտ հոգիները, որոնք ձեռք զարկին այնպիսի դրպարտութեան միջոցներու՝ որ ամեն առեն հերձուածողաց և

Հ.Թ. 172 166-60

հերետիկոսաց յուսահատ դասին զէնքերն եղած են՝ Կաթողիկէ Եկեղեցւոյ Հովուաց և Պաշտօնէից դէմ, և համարձակեցան զրպարտել զՄեզ թէ՝ Սուրբ Աթոռին, թէ՝ Օսմանեան Տէրութեան, և թէ՝ նոյն իսկ Մեր հաստատութեան առջև, որպէս զի՝ եթէ կարելի ըլլար, իրենց թիւր նպատակին հասնէին։

Հարկ չէ, որ Մենք հոս տեղս կրկնենք Զեզի ատոնց դործադրած ամէն հնարքները։ Շատ անդամ այս ամենն ալ Զեզի մեկնած ենք՝ թէ Մեր ներկայութեամբ կենդանի ձայնով, և թէ՝ 'ի հեռուստ այլ և այլ ադդաբարութեամբ, երբեմն ուղղակի Մեր դրութիւններովը՝ և երբեմն Մեր Գեր. Գեր. Աթոռակալին միջոցաւ։ Գիտէք արդէն թէ ինչպէս մեր հակառակորդները՝ 'ի սկզբան բուն իսկ իրենց նպատակը ծածկելով՝ Մեզի դէմ հնարած դանդաններովը այնպէս կը կեղծէին և կը ձեւացնէին՝ իբր թէ՝ իրենց հակառակութիւնը Մեզի դէմ անձնական խընդիր մը ըլլար։

Այս վախճանաւ՝ Մեր բազմամեայ Հովուական վարչութեան միջոցիմէջ՝ Մեր գործքերուն, և օրպիսի և իցէ Մեր ընթացքին, և վարմանց դէմ՝ ամեն կողմանէ տրըտունջներ, և ամբաստանութիւններ հնարելկը ջանային։ Եւ իրենց դիտերուն ճշմարտութեան երեւոյթ մը տալու համար՝ ըստ իրենց հաճոյքը՝ այնպիսի դոյներով դանոնք կը նկարէին՝ որ կարենային իրաւացի ցուցնել ամենուն՝ մանաւանդ պարզամտաց և անփորձ անձանց աչքին, որոնք չէին ճանչնար իրաց ճշմարիտ վիճակը, և՛չ տեղեակ էին հակառակորդաց դաղտնի խորհուրդներուն, և դիտած բուն նպատակներուն։ Յառաջ դնացին՝ նոյն իսկ Մեր դիտաւորութեանց խորութեան մէջ թափանցել ուզեցին, որպէս զի կարող ըլլային իրենց ամբաստանութեանց վրայ՝ նոր դլուխ մ'ալ աւելցնել։

Ատոնց այդպիսի հնարքները՝ բոլորովին առանց ազդեցութեան չմնային. ինչու որ՝ դտնուեցան ոմանք՝ որ լսելով հակառակորդաց այնչափ դրպարտութիւնները՝ զոր այնպիսի համարձակութեամբ և յարատեւութեամբ կը տարածէին, շփոթեցան, և անոնց ընդդիմութիւնները

իբրեւ անձնական հակառակութեան խնդիրմը ընդունին։

Բայց՝ Մեզի անծանօթ չէր՝ թէ ո՛ւր կը նայէր Եկեղեցւոյ թշնամւոյն միտքը, որն որ հաստատութեան այնչափ յառաջադիմութիւնը չէր կրնար հանդուրժել, և արդէն ուրիշ անդամներ ալ ադդին խաղաղութիւնը խռովելու, և յառաջադիմութիւնը արդիլելու համար՝ անհանդարտ հոդիները ղրդռելով՝ տեսակ տեսակ կերպարանքի տակ՝ երկպառակութիւններ ներմանած էր։ Մեր՝ երկայն ժամանակէ 'ի վեր՝ Սրբազան Պաշտօնեներնուս մէջ ունեցած բազմամեայ փորձառութիւնը՝ և այնպիսի նախընթաց ուրիշ հակառակութիւնները՝ կ'ադդէին Մեզի որ՝ հիմակուան Մեզի դէմ դիմամարտութիւններն՝ որն ոչ՝ աւելի եւ նոյն իսկ Աստուծոյ ծառայութեան նուիրեալ անձինքներէ յառաջ կուդար, անձնական խնդրոյ պատրուակի մը տակ՝ Մեր անձին վրայ՝ Եկեղեցական իշխանութեան հրամայողութենէ՝ ինչպէս որ ըլլար՝ անկախութեան մը կը դիմէին. ոմանք ալ՝ եթէ կարելի ըլլար, նոյն իսկ Եկեղեցւոյ Գերագոյն Հովուապետին վերին տեսչութենէ, և Անոր ժողովքներուն խնամակալութենէ՝ ինչպէս ոմանք ըսին, ազատ ըլլալու կը բաղձային. և ոմանք ալ ինքնօրէն կարդադրութիւններ հաստատել կ'ուղէին, մէկը այս՝ մէկալը այն եղանակաւ. որն որ՝ չէր կրնար նոյն իսկ իշխանութիւնը, և հաստատութեան կարդն ու կանոնը՝ անկարգութեան, շփոթութեան, և մինչեւ անիշխանութեան վիճակի մէջ չձգել։

Ատոնց ամենուն խելամուտ էինք, և մեծ դդուշութեամբ կը հսկէինք անկարդութեանց դրդիչներուն դործողութեանց վրայ, որ և 'ի Դուռնէն կոնդակին հրատարակութիւնը առիթ առնելով՝ կողմնակցութեան հոդին առուել եւս զայրացուցին, և տարաձայնութեան հուրը բորբոքեցին իշխանութեան դէմ։ Սկսալ ենթադրութիւն մըն է՝ 'ի Դուռնէն կոնդակը ապատամբութեան պատճառ համարիլը։ Մանաւանդ որ՝ 'ի Դուռնէն կոնդակը՝ այսպիսի չարաչար հերձուածներու առջեւն առնելու, Նուիրապետութեան ազատութիւնը պաշտպանելու, և իշխանութեան օգուտը յառաջացնելու համար տրուած է։

Արդ՝ երբոյ այսպիսի վիճակի մէջ Մեր նուիրական պարտքը Մեղի թող չէր տար՝ որ անտարբեր աչքով անհոգ հանդիսատես ըլլայինք այսպիսի վտանգալից ոգորմանց մէջ։ Այսոր համար ամենայն զգուշութեան և չափաւորութեան մէջ մնալով պարտաւորեցանք ասպարէզ մտանել՝ ամեն հակառակութեանց և վտանգներու դէմ՝ Իշխանութիւնը պաշտպանելու, և Մեր Հոլուական հոգաբարձութեան յանձնուած հաւատացեալները վերահաս վտանգներէն ազատելու։

Մեր այս որոշ և հաստատուն ընթացքը տեսնելով, ոմանք՝ մեռոի խորհուրդներուն մէջ՝ կը յուսային երենց նպատակին հասնելու՝ թէ կարող ըլլային Մեր ներկայութենէն ազատիլ։ Ուստի ուղղակի՝ և աւելի սաստկութեամբ՝ երենց ամեն զէնքը բոլորովին Մեր անձին դէմ դարձուցին։ Կ՚աղաղակէին բռնութե՞ան՝ երաւանց յափշտակութե՞ան դէմ, ամբաստանութիւններ, որոնք՝ շատ չանցաւ՝ գործքերուն դատաստանը հրապարակաւ ցուցուց՝ թէ ի՞նչպէս նոյն իսկ բողոքչաց վրայ կ՚ինայային։

Բայց աւելի եւս յառաջացան. նոյն ամբաստանութիւնները Սուրբ Աթոռին դէմ դարձնելու յանդգնեցան, երբոր նոյն Սուրբ Աթոռը՝ խնդիրքնին լսելով, և ամենայն ինչ իրեն սեպհական ճիշդ՝ և անկողմնակալ դատաստանաւը քննելով՝ առանց ակնառութեան անձանց՝ ո՛ր ազգէ, ո՛ր ծիսէ, և ո՛ր արժանապատուութենէ որ ըլլան, երբ որ կ՚լսեմ, Սուրբ Աթոռը ամենայն ինչ քննելով՝ ճանչցաւ արտունչներուն հոգին, և զրպարտութեանց անիրաւութիւնը, ջանաց վերահաս վտանգները վերցնել, և անհանդարտ ոգիները ուղղութեան բերել։ Ի սկզբան՝ խրատեց և զգուշացուց, նորէն ազդարարութիւնները կրկնեց Հայրական սիրով, ասոնցմէ ետքը՝ հրամայեց դեռաղոյն իշխանութեամբ՝ որ հպատակին երենց օրինաւոր Հովուին իշխանութեան, որուն դէմ յանիրաւի անհնազանդ և ամբաստան եղած էին։ Վերջապէս՝ երբոր չուզեցին այսպիսի պարտաւորիչ հրամաններուն ալ հնազանդիլ, և յայտնի ապստամբութեան դրօշակը բացին, պարտաւորեցաւ Առաքելական իշխանութեամբ զանոնք՝ իրրեւ անուղ-

ղայս՝ կաթողիկէ Եկեղեցւոյ մարմնէն հատանելու որոշել։

Այն ատեն՝ անոնք որ 'ի սկզբան՝ հակառակութիւնը իրրեւ անձնական խնդիր մը կը տեսնէին, և անոր համար խնդրոյն որպիսութեանը վրայ կը տարակուսէին, և կամ կը բաղձային՝ Խ-ղղ-ՐԻՍ-ՏՈՍ համար՝ իրաւախոհութիւն մ՚ընել, ճանչցան որ՝ այն հռչակուած անձնական խընդիրը՝ պատրուակ մըն էր՝ ոմանց պարզամիտ դիւրահաւանութիւնը խաբելու, և ոմանց նախանձը գրգռելու։ Այսոր վրայ աւելի եւս համոզուեցան, երբ տեսան որ՝ ասոնք մինչեւ Սուրբ Աթոռին ղերագոյն Գլխաւորութեանը իրաւանց կը հակառակէին, և զանոնք ամենքը կը հալածէին, և կը ճնշէին՝ որոնք որ երենց հետ չէին միաբանիր։

Այս բռնութիւնները աւելի եւս սաստկացուցին՝ երբ ուղածնին ձեռք ձգելով, զՄեզ մեր վիճակէն հեռացնել և աքսորել տուին։ Թէ իրօք՝ երենց Մեզի դէմ հակառակութիւնը անձնական ըլլար, պէտք էին հո՛ն դադրիլ, և ոչ թէ աւելի եւս յառաջանալ հասարակութեան խաղաղութիւնը վրդովելու, Եկեղեցւոյ հոգեւոր և ժամանակաւոր օգուտը տակնուվրայ ընելու, և ճնշելու այնչափ անձինք, որոնք հանդարտութեամբ երենց իրաւանց մէջ՝ պարտքերնին կատարելու կը նայէին։

Դուք եւս՝ Պատուական Եղբարք, Յարգոյապատիւ Գործակիցք, և Սիրելի Հաւատացեալք, գրեթէ ամենքնիդ ալ փորձն առիք, Ձեր՝ երենց թէ հոգեւոր և թէ՝ մարմնաւոր կարօտութեանց մէջ՝ ըրած բարիքները և ո՛չ յիշուեցան. ասոր փոխարէն՝ Ձեզի ուրիշ բան չհատուցաւ՝ բայց եթէ ապերախտութիւն, տառապանք, և հալածանք։ Նեղութիւն՝ և անձկութիւն սրտերնիդ պատեց՝ երբ տեսաք որ Ձեր Եկեղեցիները յափշտակեցին, եկամուտները դրաւեցին, կուսանաց, որբոց, և աղքատաց պարէնն ու նպաստները կողոպտեցին։ Ձգարհուրեցան նոյն իսկ Աստուածային Փրկչին անգին արեամբ գնուած հոգիները յաւիտենական կորստեան մէջ ձգելու։ Աղաղակեցիք, ողբացիք Մարգարէին հետ «Ողիս ծնայ և բարձրացուցի, և նոքա զիս անարգեցին»։

Այո՛, ցաւեցաք և ողբացիք Մեզի հետ՝ երբ որ տեսաք՝ նաեւ Լիբանան Մեր Զմմառու մեծարեալ Վանքին՝ զէնքով ու բռնութեամբ՝ յափշտակութիւնը, ոչնչացումն ոմանց ալ ժամանակաւ ապաւինութեան տեղի եղած էր, և ուր՝ երբենց կրթութիւնը, ուսումը, և նոյն իսկ եկեղեցական պատիւները ընդունած էին։ Անարգեցին այն Սուրբ օթեւանը՝ որ Մեր այնչափ Աստուածաբեալ նախորդներուն՝ հայրական ժառանգութիւնն ու խաղաղ բնակարանն էր։ Յարձակեցան՝ Աստուածածնայ կուսին Վերափոխման նուիրեալ Եկեղեցւոյն վրայ, խորտակեցին դռները, և արհամարհեցին այն տեղերը՝ ուր՝ համբոյր Տեառն կը հանդչին Մեր այնչափ Մեծարեալ Կաթողիկոսներու, Եպիսկոպոսներու, և Քահանաներու Սուրբ ոսկերքը։ Կողոպտեցին՝ ձեռնասուն ուսումնականաց սրբազան ժառանգութիւնը, որոնք հեռաւոր երկիրներէն՝ երբենց հայրենի տունը տեղը ձգած՝ եկած էին և այն բարեկարգ ուսումնարանին մէջ համեստ կենաց չատանալով՝ ամենայն ճգամբ ու եռանդեամբ՝ եկեղեցական հոգւով լրանալու, և սրբազան գիտութեանց մէջ յառաջանալու կը ջանային, որպէս զի՝ օր մը օգտակար ըլլային այնչափ հոգւոց փրկութեան։ Խեղճ աշակերտները, երբենց եռանդուն վարիչն ու ուսուցիչները՝ ամենքն ալ Աստուածային պաշտման, և մարմնաւոր կենաց կարեւոր սպասներէ կողոպտուած՝ դրեթէ մերկ դուրս ձգուեցան, որովհետեւ երբենց պարտուց հաւատարիմ մնալով չուզեցին հակառակորդաց հերձուածը ընդունիլ։

Բայց՝ կենդանի է Աստուած, և օրհնեալ է իւր սուրբ կրօնքը, որ դառն փորձանաց մէջ զմեզ չթողուր առանց մխիթարութեան։ Հաշիւ թէ Զմմառու Վանքէն աքսորուեցան այն ախոյեանները՝ դրսան խնամակալ հիւրընկալութիւն՝ թէ՛ Արժանապատիւ Մեծարեալ Դեր. Պօղոս Պետրոս Մարոնիանեանցն Անտիոքայ Պատրիարքէն և իւր բարեբար աղգէն, թէ՛ բարեյիշատակ Դեր. Յովսէփ Վալերկա՝ Երուսաղէմի Պատրիարքէն, ինչպէս նաեւ Լիբանանու թէ՛ Յիսուսեանց և թէ՛ Լազարեանց բարեբար Մեծաւորներէն, որոնք ամենքն ալ՝ 'ի սէր Յիսուսի Քրիստոս

ոչ՝ առաւել քան զառաւել ժողովելու և խնամելու ջանացին այն անմեղները։

Քաջալերուի՛նք ուրեմն, ամենաբարին Աստուած՝ որ կը հոգայ զմեզ՝ իւր գթութեամբը՝ օր մը նորէն կը ժողովէ զմեզ, և կը մխիթարէ մեր այն հայրենի օթեւանին մէջ։ Եւ եթէ չկամենայ առ ժամանակ մի այս մխիթարութիւնը շնորհել՝ ինքը գիտէ լաւագոյն պատասխանելը զմեզ ապահով յարկի մը տակ, և հանդարտ օդի մը մէջ։

Յիշեցէ՛ք՝ ինչպէս Մենք՝ երբ Մեր Պատրիարքութեան սահմանէն դուրս կ'աքսորուէինք, և տատանեալ մտօք չէինք գիտեր ո՞ր կողմ ընթացքնիս ուղղելու, առ Հայրն ամենայն հաւատացելոց հրաւիրուեցանք, և ունեցաք նոյն քաջալերութիւնն ու մխիթարութիւնը Սրբազան Քահանայապետէն՝ Որն որ՝ դրեթէ մոռնալով իր տառապանքները, Մեր դառնութիւնները քաղցրացնելու համար՝ Հայրական խնամօք Մեզի իր հիւրընկալութիւնը ընծայեց։ Սրբազան Քահանայապետին խնամակալութիւնը՝ ո՛չ միայն Մեզի՝ այլ Զեզի ալ խրախոյս և մխիթարութիւն է, որովհետեւ՝ ասով՝ ընդհանուր հաւատացելոց Հայրը՝ Մեր անձին այսպիսի սիրոյ ցոյցը տալով, իր գոհութիւնը յայտնեց Ձեր ամենուն վրայ, որ Մեզի հետ կատարեցիք յօժար մտօք Ձեր սուրբ պարտքերը։

Այս խորհրդածութիւններէս զատ՝ զՄեր մխիթարութիւնն ու սփոփութիւնը աւելի ևս կը պայծառացնեն Ձեր առաքինութիւնները, Ձեր անյաղթ արիութիւնն ու հաստատութիւնն, և Ձեր սերտ միութիւնը, որով ամենքնիդ ալ կրցաք՝ քաջութեամբ՝ Աստուծոյ պատերազմը պատերազմիլ՝ պաշտպան կենալով ուղղափառութեան դատին, և միաբան մնալով Ձեր՝ թէպէտեւ աքսորեալ՝ բայց միշտ օրինաւոր Հովուին և Պատրիարքին հետ, մանաւանդ որ Ձեր անկեղծ սէրը և խոնարհ հպատակութիւնն ալ համարձակ յայտնեցիք Դերադոյն Հովուապետին և Գլխոյն Եկեղեցւոյ։

Ձեր այս ընտիր և գովելի ընթացքին և առաքինական վչտակրութեանց վրայ՝ Դուք ալ մխիթարուեցէ՛ք և ուրախ կեցէ՛ք, ինչպէս երբեմն Առաքեալները «Գնացին խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուան Տեառն

աբժանի եղեն անարգելոյ » (1)։ Որովհետեւ՝ այս առաքելական հոգին և վշտակրութիւնը՝ Ձեր ամենուն համար՝ յաւիտենական փառաց և անթառամ պսակի դրաւական մըն է, ինչպէս զմեզ կ'ապահովցունէ Առաքելոյ իշխանը. « Որ զօրութեամբն Աստուծոյ պահեալ էիք հաւատովք 'ի պատրաստեալ փրկութիւնն, յայտնեալ 'ի յետին ժամանակս, որով ուրախ լինիջիք, որ այժմ սակաւիկ ինչ ըստ պատշաճի եղացդ տրտմեալ էք 'ի պէսպէս փորձութիւնս։ Զի հանդէս ձերոց հաւատոցն առաւել քան զոսկի կորստական պատուական է. որ հրով փորձեալ դտաւ 'ի գովութիւն և 'ի փառս և 'ի պատիւ յայտնութեան Յիսուսի Քրիստոսի» (2)։ Տեսէ՛ք Ձեր տառապանքներն ու չարակրութիւնները՝ հաւատացելոց սրտին մէջ ո՛րչափ սէրը, հաւատքն ու աստուածպաշտութիւնը՝ և եռանդը կաճեցունեն ու կը բորբոքեն՝ յամօթ և 'ի նախատինս հաւատակաց թշնամւոյն. « Ամենեքին՝ որք կամիցին աստուածպաշտութեամբ կեալ 'ի Քրիստոս Յիսուս, 'ի հալածանս կացցեն» կ'ըսէ Առաքեալը (3)։

Յառաջ կացէ՛ք ուրեմն՝ միաբան արիութեամբ, և ապահով կեցէ՛ք որ Ձեր մղումները և աշխատութիւնը՝ ստուգիւ յաղթութեան պսակը պիտ'որ ընդունին, որ խոստացուած է անոնց՝ որոնք 'ի սպառ համբերեցին։ Եւ եթէ երբեմն խիստ ծանր դայ Ձեզի փորձութիւնը, աչքերնիդ յերկինս համբարձէ՛ք։ Ձեր յոյսը և քաջալերութիւնը նոր զօրութիւն կըստանայ։ Մանաւանդ որ՝ աչքերնուս առջին ունինք Սրբազան Քահանայապետին Առաքելական փոյթն ու Հայրական հոգաբարձութիւնը մեր ամենուս վրայ, որով իր անձկութեանց մէջն ալ չդադրիր մեր վշտալից Եկեղեցւոյն օգնութեան հասնելու։ Վկայ են ասոր՝ իր շնորհալից խօսքերը՝ որ աս օրերս դարձեալ մեզի ուղղեցին որ Յիսուսի Փրկչին անօրինական օրերը՝ Ձեր որդիական սէրը, Ձեր յարգութիւնն ու հաւատարիմ մեծարանքը՝ Իրեն ընծայեցինք. Անոր խօսքերը արդէն կարդացիք իր Մեզի ուղղած Քահանայապետական Համառօտագրին մէջ, զոր Մեզի պարտք համարեցանք Ձեզի

(1) Գործք. Ե. 41։— (2) Ա. Պետր. Ա. 5։— (3) Բ. Տիմ. Գ. 12։

հաղորդել՝ Մեր Գեր. Գեր. Աթոռակալին ձեռքով։ (*)

Ուրիշ վկայութիւն մ'ալ ունինք՝ Սրբազան Քահանայապետին Հայրական խնամոյ՝ տարւոյս Յունուարի 6 ին տուած անղուգական Երջաբերական թուղթը։ Կը տեսնէք՝ թէ ո՛րպէսի աստուածային իմաստութեամբ Եկեղեցւոյ Վեհագոյն Հովուապետը՝ առջեւնիս կը դնէ Մեր Եկեղեցւոյն մէջ երեւցած խնդիրներն ու հակառակութիւնները։ Ինչպէս կը բացատրէ ու կը լուծէ այլեւայլ կէտերն ու դժուարութիւնները, զոր յարուցին մեր նոր—հերձուածողները։ Ինչպէս իր Առաքելական Իշխանութեան Վեհութեամբը ամենուն կը ցուցնէ թէ՝ Կաթողիկէ Եկեղեցին չկրնար կենալ առանց Հռովմայ Քահանայապետին իրաւաբանական Գլխաւորութեան, և ո՛չ իսկ նոր հերձուածողները կրնան ուղղափառ ըսուիլ, քանի որ իր Քահանայապետական դերագոյն իշխանութեան վճռովը Կաթողիկէ Եկեղեցիէն դուրս ձգուած են։ Կը տեսնէք միանգամայն՝ որ՝ և 'ի գոհութիւն Օսմանեան Բարձրագոյն Տէրութեան՝ կը մեկնէ և կը ցրէ այն ամէն դժուարութիւնները և կասկածները, զոր հնարեցին հակառակորդները Սուրբ Աթոռին կարգադրութեան և դիտաւորութեան բոլորովին հակառակ, և մինչ Կաթողիկէ Եկեղեցւոյ ճըշմարտութիւնները կը յայտնէ, երբէք հոգեւոր իշխանութեան սահմանէն դուրս չելլար. և աշխարհական կառավարութեան իր սեփհական իշխանութիւնը կը ճանչնայ, կ'ընդունի, և կը յարգէ Աստուծոյ պատուիրանին համեմատ՝ «Տո՛ւք զԿայսերն՝ Կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուծոյ» (1)։ Սրբազան Քահանայապետին խօսքերն ու անոնց ճիշդ իմաստը Ձեզի անկէ, Պատուական Եղբարք, և Սիրելի Գործակիցք, ժողովրդեան մի առ մի մեկնել, ու բացայայտել, որպէս զի լաւ եւս տեղեկանան ամենքն ալ՝ Կաթողիկէ սկզբունքներու, և յարատեւեն իրենց պարտքը միշտ ուրախութեամբ կատարելու։ Երանի՛ թէ Քահանայապետական Երջաբերականին մէկ շողն ալ ծագէր ու լուսաւորէր այն խեղճ խաւարեալ միտքերը։

(*) Յիշեալ Համառօտագրին Հայերէն թարգմանութիւնը տես երես 11։

(1) Մատթ. ԻԲ. 21։

Աղօթենք ուրեմն՝ առ Փրկիչն մեր Յիսուս, որպէս զի իր Անարատ Մօր Աստուածածնայ Կուսին բարեխօսութեամբը՝ մեր նեղութեանց ու տառապանաց օրերը կարճեցունէ, և չնորհէ մեր Եկեղեցւոյն և աղգին, և ընդհանուր Եկեղեցւոյ և բոլոր աշխարհիս՝ ցանկալի անդորրութիւնն ու միխիթարութիւնը՝ որ ժողովրդոց երջանկութիւնն է, և Պետութեանց փառք ու պատիւը։ Աղօթենք և մեր Օգոստափառ Ինքնակալին կենաց և բարօրութեանը համար։ Վստահ ենք որ ինքն իր ուղղափառ հպատակներուն ալ գութ ու սէր ունի, ինչպէս մեծամարդասիրութեամբ հաճեցաւ ամենքնուս կրօնից աղատութիւն չնորհել, և սոր բարերար արդասիքը իւր արտութիւն չնորհել, և սոր բարերար արդասիքը իւր արքունի հովանաւորութեան տակ վայելեցինք, այնպէս հիմա ալ նոյն Օգոստափառ Ինքնակալը մեր աղգային իրաց ճշմարիտ վիճակին տեղեկանալով՝ նոյն աղատութիւնն ու պաշտպանութիւնը մեզի նորէն չնորհելու .կը բարեհաճի։ Աղօթենք նաեւ մեր մլորեալ եղբարց համար, որպէս զի «առողջացեալք հոգւով՝ խոսաովանութեամբ և ապաշխարութեամբ մտցեն յԵկեղեցի սուրբ, և ընդ ժողովրդեան Տեառն հանցեն զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»։ Վասն ըստ Առաքելոյն՝ «եւ նոքա եթէ ոչ 'ի նմին անհաւատութեան կայցեն, պատուաստեսցին. զի կարող է Աստուած միւսանգամ պատուաստել զնոսա»։ (1)

Այսու ակնկալութեամբ, եւ ջերմաջերմ մաղթանօք՝ կը խնդրենք Աստուծմէ երկնաւոր առատաձիր օրհնութիւնը՝ Ձեր ամենուդ վրայ, և կը յանձնենք զՁեզ 'ի բարեխօսութիւն և 'ի պաշտպանութիւն Սրբոյ Կուսին Մարիամու, և Հօր մեր Սրբոյ Գրիգորի Լուսաւորչի Հայաստանեայց Եկեղեցւոյ։

Տուեալ 'ի Հռովմ, արքատոյ Դրան Սրբոյ Բանիբարձոյ, 'ի 24 Փետրուարի 1873 և 'ի Վեցերորդ ամի Պապութեան Մերոյ։

ԱՆՏՈՆ ՊԵՏՐՈՍ Թ.
Պ. Կ.

Ցվերէ Վ. Սանթալճեան
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

(1) Հռովմ. ԻԱ. 29։

ՊԱՏՈՒԱԿԱՆ ԵՂԲՕՐ ԱՆՏՈՆԻ ՊԵՏՐՈՍԻ Թ.

ՊԱՏՐԻԱՐԲԻ ՀԱՅՈՑ ԿԻԼԻԿԻՈՑ

ՊԻՈՍ ՊԱՊ Թ.

Պատուական Եղբայր Ողջոյն և առաքելական Օրհնութիւն։ Զոր յանուն Քո և Քոյոց Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, Կղերց և ժողովրդեան յայտ արարեր զերանդեան, զսիրոյ, զհպատակութեան և զըղձից զդայմունս՝ Պատուական Եղբայր, այնք ոչ միայն ընդունելի մեզ ընծայեցան այլև պատշաճագոյնք յամենքել զտխրութիւնս մեր, զի այնուքիւք վերստին ծանեաք զյոյս չփոթից զծաղեալն յԵկեղեցւոյ Հայոց յերեսաց չարարուեստից ոմանց. այլև եթէ բազում յոյժ են նոքա՝ որք ո՛չ խոտորեցան 'ի պարտուպատշաճ հպատակութենէ առ այս Աթոռ Պետրոսի և ոչ 'ի պարտուցն որ առ Քեզ։ Եւ զայս միխիթարութիւն քաղցրագոյն իսկ ընծայէ այդ դժուարին պայման հաւատացելոց՝ որք ընդ փորձ անցանեն աշխարհական իշխանութեան զայրագնելոյ և ընդդէմ իւրեանց դրդռելոյ յապստամբաց անտի, 'և որք միանգամ շուրջ պատեալ յորոգայթից և 'ի հնարից նոցա մասնին 'ի հաճոյս բուռն ատելութեան նոցա։ Քանզի այսպիսի արիութիւն և պնդակազմ հաստատութիւն՝ 'ի յարատեւ և 'ի հանապազորդ հարստահարութիւնս սաստկացեալս՝ այնպէս իմն շքեղ հանդիսացուցանէ զհաւատս Հայոց, զի թուին ոչ միայն ջնջել իմն զարատն՝ որով սակաւաթիւ ուրացողքն այնուքիկ արատաւորեցին զազգն իւրեանց, այլեւ փոխարինել իսկ առատապէս։ Ի ժամանակաց հետէ դժնդակ իմն պատերազմաւ տառապի Եկեղեցի ամենայն ուրեք, և 'ի լուծումն կապոյ միութեան նորին՝ սաստկապէս մաքառին հանապազօր դրունք դժոխոց, փոյթ անզգամաց բազում հզօրք աշխարհի, սուտ եղբարք, որով դեպ լինի զի բազումք 'ի պաշտպանաց նորին՝ որք ո՛չ կամին անջատիլ 'ի նորին միութենէ՝ ճնշին ամենայն ուրեք, որպէս ասէ Առաքեալն՝ 'ի վտարս, 'ի վիշտս, 'ի հալմոնս

բաղում անգամ, 'ի սավ և 'ի ծարաւ, 'ի ցուրտ և 'ի դրկութիւն։ Սակայն որպէս այսու պարտեցաւ աշխարհ. այսպէս և Հայք՝ որք հզօրեղապէս կան 'ի մարտ պատերազմի ներհակացն տանելով, տեսցեն զապստամբսն ընկճեալս և անդրէն առ ինքեանս դարձեալ զաղատութիւն և զխաղաղութիւն ազգի իւրեանց։ Վասն որոյ՝ Պատուական Եղբայր, յորդորեսցի՛ր զԵպիսկոպոսակիցս, զԿղերս և զժողովուրդ Քո՝ որք հըպատակ կացեալ և յարեալ յայս Առաքելական Աթոռ և յօրինաւոր իշխանութիւն Քո՝ վասն անուանն Յիսուսի աւրհնեալ ընդունարարք, որպէս զի մի՛ երբեք յետս կասեսցին յառաջադրութենէ իւրեանց, այլ վստահութեամբ ակն կալցեն Տեառն, արիաբար գործեսցեն և սփոփեսցին. քանզի ոչ խոստումն Աստուածային եղեալ առ Պետրոս պակասել կարէ և ոչ երբեք Եկեղեցի կրէ զյարձակումն առանց հպատակելոյ և կամ հոսելոյ զթշնամիս իւր։ Վկայութիւն դիր նոցա եթէ կարի ինն հանոյ եղեւ Մեզ պաշտօն նոցա, և թէ Մեք աղաչեմք եռանդեամբ զՏէր զի թեթեւաբեռնեսցէ զԵկեղեցին Աբեւելեան զվաստակեալն, և ամբարձցէ զայն 'ի պայծառութիւն դարուցն առաջնոց։ Եւ հզօր զօրութեամբ և շնորհօք իւրովք զօրացուսցէ զնոսա, և սերտ զոդիւ սիրոյ միացուսցէ ընդ Մեզ, ընդ Քեզ և ընդ միմեանս, և հաստատեսցէ յերկիւղալից պատերազմիս, զի կարող լիցին վայելել զուրախարար ելսն։ Եւ 'ի նշանակ երկնային շնորհաց և 'ի գրական առանձինն բարեհաճութեան Մերոյ շնորհեմք յօժարակամ զԱռաքելական Օրհնութիւն Քեզ՝ Պատուական Եղբայր, մէն մի Աբքեպիսկոպոսաց և Եպիսկոպոսաց՝ որ Քումդ իրաւարարութեան հպատակ կան, և համօրէն հաւատարիմ Կղերդ և ժողովրդեան Քո և Նոցա։

Տուեալ 'ի Հռովմ առ Սրբոյն Պետրոսի 'ի 13 Յունուարի 1873 'ի էր. ամի Քահանայապետութեան մերոյ։

ՊԻՈՍ ՊԱՊ Թ.

Ա. Պատուական Եղբայր Անտոն Պետրոս Թ. Պատրիարք Հայոց Կիլիկիոյ։

1882.

фес 104

ՀՀ Ազգային գրադարան
NL0108821